Եղիշե Չարենց

Հազար ու մի գիրք կարդացի — ամենից լավ տաղն է էլի

Հազար ու մե գիրք կարդացի խելացի գիրք չտեսա,
Հազար կնկա գիրկն ընկա սիրեկան գիրկ չտեսա:

Հասա մինչև Ֆռանգստան, երգ ու տաղեր լսեցի
Սայաթ-Նովի ձիրքի նման երկնալին ձիրք չտեսա:

Աղեքի հետ սեղան նստա, նոքարի հետ խմեցի՝
Մարդու ասած խոսքերի մեջ արդար կշիռք չտեսա:

Հազար գոգալ սիրտս էրեց ու հազարին սիրեցի
Քո սուրբ կրքից ավելի վառ ու անմար կիրք չտեսա:

Ամեն բանից բար ու բեզար երեսս շուռ տվեցի
Բաղերն ընկա՝ քեզնից անուշ ու հասած միրգ չտեսա: